

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆՈՒԹԵՐՈՐԴ

Կիրակի, յուլիսի 30-ին, առաւօտեան ժամը 11-ին, ս. Պօղոս եւ Պետրոս եկեղեցում

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾԵԱՆԻ

համար կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին հանգուցեալի յիշատակի յարգողները
յայտնում են ի գիտութիւն երեւանի հասարակութեան:

1—1

Միջոյց Մեքսիկայի եւ Սօֆիա Ստեփանեան Մուրադեանները ցաւօք սրտի
յայտնում են ծանօթներին եւ բարեկամներին, առաջինը իր թանգազին մօր, իսկ երկ-
րորդը սիրելի սկսարձ:

ԾՈՒԾԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ ուրբաթ, ամսիս 21-ին, Օդեսայում: Թաղումը կը կատարվի
նոյն Օդեսայի քաղաքում:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամարային ծաղկոցներ գիւղերում.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գրիգոր Զանգեանի
թաղումը. Նամակ Ալեքսանդրովից. Նամակ
Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտա-
քին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ ցու-
ցահանգէսից:

ԱՄՍՐԱՅԻՆ ԾԱՂԱՅՆԵՐ ԳԻՒԼԵՐՈՒՄ

Ուշագրութեան արժանի է մի փորձ, որ
ձեռնարկել են շատ նահանգներ գիւղական
մանուկներին ամառ ժամանակ խնամելու
նպատակով: Ամառվայ յունիս, յուլիս եւ օ-
գոստոս ամիսներում, երբ տեղի ունեն գիւ-
ղական մեծ աշխատանքներ, հասակաւոր
մարդիկ ստիպված են ամբողջ օրերով հե-
ռու լինել տանից: Նրանք գնում են արտեր,
խոտահարքեր, այգիներ եւ արօտներ զա-
նազան գործերով:

Տղամարդկանց հետ յաճախ ստիպված են
լինում հեռանալ տանից եւ կանայք, կամ
իբրեւ աշխատողներ եւ կամ աղամարդկանց
հաց ու պաշար տալու համար: Նրանք են-

րը, մնալով տանը, շատ անգամ մնում են
անկնամ եւ ենթարկվում են զանազան
պատահարների ազդեցութեան, հիւանդա-
նում են, իրանց վնասում են եւ երբեմն
պատճառ են լինում հրդեհների:

Այլ առաջ ունենալով այդ աննպաստ
հանգամանքները, այլ եւ ցանկանալով օգ-
նութիւն հասցնել այն ընտանիքներին, ո-
րոնց ձեռքը կապված է երեխաների պատ-
ճառով, հիմնով են հիմնվում են գիւ-
ղերում մամային ապաստարան-
ներ մանուկների համար: Ներկայումս այդ
պիսի ապաստարաններ գոյութիւն ունեն
տասն նահանգում: Մամարայի նահանգը ու-
նի 90, Ուֆիմի նահանգը 30 ապաստարան,
միւսները աւելի սահմանափակ թւով:

Ապաստարանը ընդունում է մանուկնե-
րին 2 տարեկանից սկսած մինչեւ 8 տարե-
կան հասակը եւ խնամում է նրանց ամբողջ
ցերեկվայ ժամերի ընթացքում, առաւօ-
տեան 5—6 ժամից, մինչեւ երեկոյան մու-
թը: Ապաստարանում երեխաներին ընտե-
րացնում են մաքրութեան եւ կարգապա-
հութեան, սովորեցնում են կարգալ, եթէ
հասակը ներում է, գուարձացնում են
խաղերով, երգերով եւ գրոյցներով, փոքրիկ

բաժնում բոլոր մասերն այնպէս են դասաւոր-
ված, այնպէս խառնված իրար, որ այլ եւս
գիտած է լինում որչափ, թէ ոյն է սեփական
զաղթականութիւնը եւ որը միայն գերիշխա-
նութիւն է ճանաչում:

Ցուցանանքն կազմակերպողներն ամէն բան
արել են, որպէս զի նախ այս բաժնում ընդ-
հանուր միութիւն լինի առանց ի նկատ առ-
նելու իշխանութիւնների անկախութիւնը եւ
երկրորդ՝ որքան հնարաւոր է, չքել եւ հա-
րուստ կազմակերպված լինի: Նրանք հասել են
իրանց նպատակին: Հնդկա-Չինը ամենաչեղ եւ
ամենալաւ կազմակերպված բաժնիներից մէկն
է: Թուով հինգ գանազան ձեւի եւ մեծութեան
պարասներ ներկայացնում են այդ երկրի ար-
դիւնաբերութիւնները, արհեստները, կրօնը եւ
գեղարուեստը:

Նայենք դրանցից գլխաւորներին:

Առաջին չէնքը Հնդկա-Չինի արդիւնաբերու-
թիւնների պալատն է, որ չինված է Կոնֆուի-
նայի չրվալաքում գտնվող Ծօ-Լօնի տաճարի
ձեւով: Այս պալատում ի ցոյց են դրված այդ երկ-
րի ամեն տեսակ բերքերը—բրինձ, թէյ, սուրճ,
բամբակ, գլղպեղ, ծառերի բուսակներ կեղեւ,
ափիօն, փղոսկր, ծառի իւղ, ծխախոտ, մե-
տաք, նուրբ փախթիւններ եւ այլն: Թէ ինչու
առհասարակ եւրօպացիները իրանց արհւմն
անգամ չեն խնայում հեռուոր գաղթականու-
թիւնների համար եւ յաճախ ոտնակոխ են ա-
նում ամենապարտաւոր մարդկային իրաւունք-
ները եւ արդարութիւնը, այդ ցոյց են տալիս
յիշալ բերքերի վրա դրված վիճակագրա-
կան թւերը: Բազմաթիւ ընկերութիւններ,

աղջկաներին տալիս են կարի թելք եւ աշ-
խատանքներ:

Ապաստարանի ղեկավարութիւնը յանձն-
վում է վարժուհու կամ ուսուցչի, որին
օգնում են վարժովի մի դայեակ եւ խոհա-
րար: Ապաստարանում մանուկները խնամը
են ստանում 1¹/₂—2 ամիս, սակաւ դէպքե-
րում եւ աւելի:

Գիւղացիներին սկզբում շատ խորթ էր
թուում մանուկներին ապաստարան տալը,
իսկ երբ փորձը աջող հետեւանքներ ունե-
ցաւ եւ նրանք տեսան զգալի թելքեւու-
թիւն իրանց համար եւ բարեբար աղջեցու-
թիւն մանուկների վրա, այն ժամանակ ի-
րանք սկսեցին խնդրի ապաստարաններ
հիմնել գիւղերում: Մանուկները, կանծաւա-
ր, քրտանքներ կատարելով, կազմուրում
էին իրանց առողջութիւնը, իսկ կրթու-
թիւն ստանալով՝ զարգանում էին:

Մամարային այդ ծաղկոցների պահպա-
նութիւնը սակայն պահանջում է գրամա-
կան միջոցներ, իւրաքանչիւր ընթացքում
120—150 ռուբլի ծախք, որ պէտք է հայ-
թայթել: Մինչեւ այժմ եղած ապաստարան-
ների համար հոգացել են կամ գեմտովո-
ները, կամ աշխատանքի տները եւ կամ
մասնաւոր անձինք, օրինակ կայրաւաճառե-
րին:

Հետաքրքրական է թէ որքան աջող կը
լինի նոյն հիմնարկութիւնը մեր գիւղական
աղջկաների կրթութեան շրջանում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Մեր ստացած բոլոր ուսու լրագիրների մէջ
առկած են համակրական յօդուածներ հանդու-
ցեալ Գրիգոր Զանգեանի մասին: Ամենքը վկա-
յում են, որ Զանգեանի մահը մի խոշոր կո-
րուստ է ուսաց գրականութեան համար,
չնայ որդեւորութեամբ եւ անկեղծ համակրա-
նով լի մահացուցականների, յիշողութիւնների
մէջ Զանգեան անուանվում է 60-ական թւա-
կանների մեծ ընթերցանների երգիչ, հրապարա-
կախօս—պատմաբան, մեծ պատկերահան, որ
կարողանում էր անուրանալի տաղանդով նկա-

կազմված ֆրանսիացի վաճառականներից, շա-
հազորում են Հնդկա-Չինի արդիւնաբերութեան
այս կամ այն ճիւղը, միայն 1898 թ-ի ընթաց-
քում մի ընկերութիւն արտահանել է 820 հա-
զար ֆրանկի բամբակ, 778 հազար ֆրանկի
ծառի իւղ, 630 հազար ֆրանկի փախթի եւ
այլն: Դրա հետ միասին երկիրը քաղաքակրթ-
վում է. չինացի են հաղորդակցութեան յարմար
ճանապարհներ, երկաթուղիներ, գետերի վրա
ձգված են լայն երկաթեայ կամուրջներ, որոնց
հետաքրքրական մտքները ի ցոյց են դրված
այստեղ. սրանցից մէկը, Կարմիր գետի կու-
մուրը, 1882 մար երկարութիւն ունի: Այս-
պէս է եւրօպան. իւրաքանչիւր տիրապետած
երկրին նա տալիս է իր քաղաքակրթութիւ-
նը, բայց նոյն երկրի բնական հարստութիւն-
ների գնով:

Այս չինութեան պատերը ծածկված են
Հնդկա-Չինի չորս գլխաւոր քաղաքների՝ Սայ-
գոնի, Հաւօյի, Հիւէի, Պեոմ-Պենի պլաններով
եւ ուրիշ մեծամեծ քաղաքներով, որոնք ցոյց
են տալիս այդ երկրի առաջադիմութիւնը Յը-
բանիայի տիրապետութիւնից յետոյ եւ բեր-
քերի տեղերը: Այստեղ չը կայ մի քարտէշ, որ
ցոյց տար այդ երկրի կրթական առաջադիմու-
թիւնը, զարգացման թիւը, մասուրը, եթէ գո-
յութիւն ունի, հրատարակչական գործը: Առ-
հասարակ ցուցահանդէսում գաղթական երկիր-
ները համարեն միշտ ներկայացված են միայն
եւ միայն վաճառականական, գուտ չափաւոր-
րական տեսակէտից: Այդ երկրների մտաւոր
եւ բարոյական վիճակը մնում է անյայտ. եթէ
կան մի քանի բնիկներ, սրանք էլ իբրեւ նը-

րել գործիչների դէմքերը: Անկարող լինելով
բոլոր լրագիրների վկայութիւնները բերել այս-
տեղ, մենք վերցնում ենք միայն «Русскія Вѣ-
домости»-ն, ուսաց այս ամենալաւ լրագիրը,
որի հետ կապված էր հանգուցեալը իբրեւ աշ-
խատակից եւ ղեկավարներից մէկը:

Երէկ, յուլիսի 17-ին—առում է լրագիրը
—ժամի 4-ին կէսօրից յետոյ, վախճանվեց
Գրիգոր Աւետիսեան Զանգեան: Խորին վիշտ
պատճառեց մեզ այդ լուրը: Մահը տարաւ
մեր խմբագրութեան մօտիկ մարդուն, նրա
ամենագործունէայ անդամներից եւ մեր լր-
ագրի հրատարակութեան մասնակիցներից
մէկին: Մօտ քսան եւ հինգ տարի Զանգեան
անընդհատ աշխատել է «Русскія Вѣдомос-
ти»-ի մէջ, Բայց այս անժամանակ մահը խո-
րին վշտով կը համակէ ոչ միայն հանգու-
ցեալին մօտիկ մարդկանց չըմանը, որոնց
համար նա միշտ թանգազին էր իբրեւ գե-
րազանց ընկեր, միշտ անկեղծ յարաբերու-
թիւնների մէջ, հաւատարիմ, վստահելի բա-
րեկամ, բարի, սրտազին մարդ, նրան կը յի-
շեն շատ հազար ուս ընթերցողներ, որոնց
չըմանում նրա անունը վայելում էր արժանի
հոգակ եւ լայն ժողովրդականութիւն ամենից
առաջ իբրեւ «Эпоха великихъ реформъ»
գրքի հեղինակ, մի հրատարակութեան, որի
նմանը չէ եղել Ռուսաստանում իր արագ եւ
լայն ազդեցութեան պատճառով: Ինչ մի տարի
չը կայ, որ առնուց Զանգեանի գրական-հա-
սարակական գործունէութեան 25 ամեա-
կը, եւ այդ առջ ցոյց տուել թէ որքան
նրա անունը ժողովրդականացած է մեր ըն-
թերցող հասարակութեան մէջ, եւ այդ հըն-
չակին նա կատարելապէս արժանի էր: Հան-
գուցեալը թէ իր մեղքերով, թէ իր անձ-
նական յատկութիւններով եւ թէ դրանց
իր բազմաբղիւն կեանքի մէջ իրագործելու
կերպով մեղանում ճշմարիտ հասարակական
գործիչի մի հազուադէպ օրինակ էր. «հա-
սարակական գործիչը» մեղանում գեռ էլի
նոր կոչում է եւ Զանգեան այդ անունը
կրողների մէջ ամենափայլուններից եւ լա-
ւագոյններից մէկն էր: Լինելով անսովոր
վառվառ մի մարդ, որ անտարբեր չէր օր-
վայ հասարակական չարիքների վերաբեր-
մամբ, լինելով մի ամբողջացած բնաւորու-
թիւն, մի մարդ, որ մինչեւ ուսկիցս ծու-
ծը տողորված էր այն գաղափարներով, ո-
րոնց համար նա իր ամբողջ կեանքում, մին-
չեւ ամենավերջին րօպէսները, կուտում էր իր
գործունէութեան բոլոր ապարդէսներում
մի խոտակ երեւոտարդական կրակով: Զան-
գեան անչեղ հետեւողականութեամբ ամեն
տեղ եւ ամեն բանի մէջ գեղակարվում էր իր
սիրած նշանաբանով—«magis amica veritas»
(աւելի բարեկամ է ճշմարտութիւնը): Զը

մուշ նրանց վայրենի վիճակի. իսկ թէ իրանք
եւրօպացիք լինէն անքաղաք ողորմելի վայ-
րենիների խաւար հոգիների համար—այդ չէ
իմանում այցելուն: Դրա փոխարէն լաւ երե-
ւում է բնիկների զինուորական կրթութիւնը,
գաղթական երկրների պալլիվոններում կարգ
պահպանողները բնիկ զինուորներ են, որոնք
ամենքն էլ լաւ մարդկանք, լաւ զինված, եւրօ-
պացի զինուորի տաղաւորութիւն են գործում:
Հրացանները ձեռներին՝ նրանք կանանցում են
իրանց հայրենիքը ներկայացնող պալլիվոնների
առաջ, եւ զինուորական կարգապահական խըս-
տութիւնը, միացած վայրենութեան հետ, տա-
լիս է նրանց մի անողորմ տեսք:

Առաջին պալլիվոնից դուրս գալով այցելուն
տեսնում է իր առաջ մի մեծ եւ բարձրադիր
սանդուղք, որի կողքերի վանդակները ներկա-
յացնում են վիշապների չարքեր: Այս սան-
դուղքով այցելուն բարձրանում է դէպի մի
բլուր, որի կատարին չինված է Բուդդայի
տաճարը: Զինական ճաշակով պատրաստված մի
չէնք է դա, ներքեւ լայն, ջանի բարձրանում
է, աստիճանաբար նեղանում է, ստանալով
զանգակի ձեւ: Կտրի վրա կախված են
բազմաթիւ մանր զանգակներ, նրանց լեզուակ-
ներից քաշ են ընկել, տերեւի ձեւով, թղթի
կտորներ, այնպէս որ ամենաթիւնը քամին
զանգահարում է. երեւի այս ձայների ներդաշ-
նակութիւնը որ եւ ի խորհրդաւոր նշանակու-
թիւն ունի Բուդդայի հետեւողների համար:

Այս չէնքը Պեոմ-Պենի արքայական տաճարի
ընդօրինակութիւնն է. նա քառակուսի է եւ
երկու հակառակ պատերի վրա երեքական

լինելով ուսու իր ծագումով, նա մի և նոյն ժամանակ ճշմարիտ ուսու հայրենասէր էր այս բանի ամենալաւ ժողով. այն ամենը, ինչ թանկագին էր ուսու հասարակութեան համար, այդ հասարակութեան բոլոր լաւագոյն գաղափարները և ձգտումները, այն ամենը, ինչ նրան ուրախացնում և վշտացնում էր—այս բոլորը հանգուցեալի համար միշտ եղել է կենսական, անձնական, արտաքին հարց։ Այս բոլորը փայլուն կերպով արտայայտուած էր և նրա երկարատեւ հրապարակախօսական գործունէութեան մէջ, այս բոլորը կարմիր թելի պէս անցնում էր նրա թէ խոշոր գրական աշխատութիւնների և թէ մանր յօդուածների և նկատողութիւնների մէջ... Մի և նոյն արտագին զգայնութեամբ արձագանք էր տալիս նա և իր հայրենի երկրի—կովկասի, ինչպէս և իր հայրենակից հայերի կարիքներին ու չափերին Անձնական եռանդով և աշխատանքով նա կարողացաւ հաւաքել շատ խոշոր միջոցներ թիւրքիայում փնտրելով հայերին օգնելու համար։ Նրան անձամբ ճանաչողները, որոնք ականատես են եղել թէ ինչ ծանր բարոյական տանկանքներ է կրել նա, խորապէս ցնցված իր հայրենակիցների թըշուառութիւններին, ակամայ հարց են տալիս թէ արդեօք նրա առողջութիւնը չը քայքայւի այն ամենը, ինչ նա կրեց և զգաց այդ նրա համար մուշկ և ծանր ժամանակում... Մահը վրա հասաւ. անսպասելի կերպով, թէև անսպասելի ջանքերն հիւանդի դուրսեան մէջ էր մօտ մի ամիս Արմիայի Մօսկվայի վերադառնալուց յետոյ։ Այդ վերջին ժամանակը սաստկացան արդի հիւանդութեան նշանները, որ վաղուց կար նրա մէջ։ Բայց միայն մահից երեք օր առաջ նա մտաւ անկողին և չէր վեր կենում, որովհետեւ առհասարակ թուլութիւն էր գտնւում և տաքութիւն ունէր։ Մահվան օրը, յուլիսի 17-ին, նա կատարեալ գիտակցութեան մէջ էր և մահից մի քանի ժամ առաջ խօսում էր իր մի լրագրողին յօդուածի առիթով «Русская Вѣдомость»-ի խմբագրի հետ։ Օրհնական վայրէջքով մի ակնթարթում վրա հասաւ։ Ջանքներն մեղաւ հանդարտ, առանց տանջանքների։

Մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին մի քանի ուրիշ յօդուածների հետ, որոնք նուիրված են մեր տաղանդաւոր հայրենակցի յիշատակին։

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Մօսկվայից մեզ հեռագրում են յուլիսի 21-ից. «Այսօր մեծ հանդէսով թաղեցին Ջանչեանին։ Պատկեր դրված էին մօտ քառասուն հատ, որոնց թուում «Русская Вѣдомость»-ի, «Курьер»-ի, «Право»-ի, «Тифлисский Листок»-ի, «Մշակ»-ի խմբագրութիւններից, Մօսկվայի հաշտարար դատարաններից, նահանգական դատարանից, Մօսկվայի փաստաբաններից, բարեգործական և հասարակական հիմնարկութիւններից և մասնաւոր անձինքներից։ Չը հայեւորով ամարալին խուլ ժամանակին, դադարը յուղարկւեալու էր ժողովրդի անգին բազմութիւն։ Հոգեհանգիստ կատարեցին «Рус. Вѣд.»-ի խմբագրատան մօտ և Լազարեան ճեմարանի մօտ, որի սանն է եղել նա։ Արտա-

դուներ ունի, որոնք զարգարված են Բուդդիստի նկարներով։ Ներսում չորս պատերի տակ շինված են Բուդդիստի սեղաններ և շարված են զանազան մեծութեան արձաններ ոսկեղօծ մետաղներից։ Բուդդիստի բոլոր արձանները ներկայացնում են նրան բազմած, դէպք խաղաղ և անսահման երանութեամբ լի, շատ մեծ, շատ վեհ գործ կատարած լինելու գիտակցութիւն և նկարված այդ դէպքերին Բուդդիստ, կարծես, այդ քաղցին իր ետեւում ունի իր հարկւր միջոցաւոր հաւատարմանը հօտը որոնք ազատել է ներկայական աշխարհի անվեր տառապանքներից, մեղքներով նրանց մէջ մարմնի կարիքները, և ձգում է ամենին դէպի իր Ներվանան, դէպի յաւիտեական երջանիկ մոռացութիւնը։ Մի ուրիշ կողմում բարձրանում է Բուդդիստի մի աւելի մեծ սեղան, ուր ինքն է բազմած, իսկ չորս կողմում են գլխավորելով թուլում են զանազան թեւաւոր կենդանիներ, երեւի հրեշտակներ։ Այս սեղանի աջ ու ձախ կողմերում նստած են տաճարների պահապան ոգիները սոսկալի դէմքերով։ Մի քիչ հեռու սեղանից կանգնած է մի բուդդիստական ճգնաւոր, որ կրկար գլխաւորելով, երկար միջուղով, սա յիշեցնում է միջնադարեան քրիստոնեայ անապատականներին։ Այստեղ է նաեւ Կուանդին ոսկեհագն աստուածուհին, որ 24 ձեռք ունի։ Սրա չորս կողմում շարված են աճիւնների արքայան ստիտներ, անուշահոտ իւղերի ամաններ, բուրբուռներ և այլ եկեղեցական սպասներ։ Ահա նաեւ թեւաւոր ձին, որ կրում է իր մէջքին բուդդիստական ու գրքերը։

Բոլոր այս արձանները և միւս առարկաները

սանկեղին բազմաթիւ ճառեր, որոնց մէջ հանգուցեալը ընտրուելու էր իբրեւ հրապարակախօս, հասարակական գործիչ, փաստաբան, ընկեր, մարդ։ Աչքի էին ընկնում «Рус. Вѣд.»-ի ներկայացուցչի պրօֆէսոր Անուշինի, իրաւաբանական ընկերութեան նախագահ պրօֆէսոր Մուրոմցեւի, փաստաբանների ներկայացուցչի Դորոքոսովի և մտերիմ բարեկամ երդուեալ հաւատարմատար Ստոլպովսկու ճառերը»։

Գրիգոր Զանչեանի մահվան առիթով ստացանք հետեւեալ հեռագիրները.

Եր և Ե. Ե. 23 յուլիսի. Ողբում ենք «Եղբայրական օգնութեան» ստեղծող, անփոխարինելի եղբայր Գրիգոր Զանչեանի մահը։

Ներսանի երիտասարդութիւն։ Ս զ ն ա խ 23 յուլիսի. Այսօր հոգեհանգիստ կատարվեց Գրիգոր Զանչեանի համար բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ։ Դերասան Յարութիւնեան զգացված ճառ արտասանեց ի դիմաց երիտասարդութեան։

Եր և Ե. Ե. 23 յուլիսի. «Մեր խորին վշտն ենք արտայայտում հայ որբերի միակ պաշտպան Գրիգոր Զանչեանի խորապէս զգալի վաղահա մահվան առիթով։

Վանեցի գաղթականներ։ Դ եր և Ե. Ե. 23 յուլիսի. Այսօր հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Գրիգոր Զանչեանի համար։ Ծառում ենք, որ չը կայ այլ ևս այդ թանկագին և անխնայ գործիչը։

Ծառողներ։

ՆԱՄԱԿ ԱԼԷՔԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Յուլիսի 20-ին Ալեքսանդրօպոլում թոքախտից վախճանվեց 31 տարեկան հասակում մի փրկ և վաղվառն երիտասարդ Աւագ Խաչատրեանց, որ ուսումն ստացել էր Մօսկվայի Լազարեան ճեմարանում 1891—1892 թվականներին հանգուցեալ թիֆլիսի թատերասերական խմբի անդամներից մէկն էր, ապա այդ ասպարէզին և երաժշտութեան հանգուցեալ ծառայեց 1892-ից մինչև 1898 թիւ։ Ալեքսանդրօպոլում, զբաղվելով հօր առեւտրական գործերով։ Այդ թիւ վերջերում սկսեց զարգանալ թոքախտը, որ վերջին ժամանակներս արեւմտեան զարգացաւ, որ նա համարեա միշտ անկողնում էր։ Նրա հայրը, Արշակ Խաչատրեան, Ալեքսանդրօպոլի հարուստներից մէկն է, չը նստած որ դատարանով զբաղւած է իրաւունքներից։ Հանգուցեալի վաղաժամ մահը արդուում է մարդու սիրտը, մանաւանդ երբ դիտես, որ խեղճ ծաղիկ հասակում գերեզման մտաւ չորսիւ իր հարուստ ծնողի անտաքերութեան։ Չը նայած հօր անգին կարողութեանը, նա մեղաւ իր առանձին աղքատիկ ընկալանքում, ամենաողորմելի դրութեան մէջ, կարօտ բժշկական օգնութեան, իսկ օրվայ պարէնը հիւանդը հայր թաղում էր բարեկիտ ընկերների օգնութեամբ։ Հանգուցեալը կարող էր նոյն իսկ

լը իրօնական գեղարուեստի սիրուն արտադրութիւններ են և բուդդիստական հաւատացեալի վրա կարող են խորին տաղաւորութիւն գործել։ Կրօնական այս պատկերը ամբողջացնելու համար տաճարից քիչ հեռու, մի ցանկապատի ետեւում, ի ցոյց է դրվում նաեւ մի սիրուն սպիտակ փղի, Հնդկաստանի արքայան կենդանին, որ Բուդդիստի առանձին սիրող առարկան է, ըստ հնդկականի։

Բուդդիստական տաճարի ներքնայարկում գտնվող Գրմէրների ճարտարապետական արհը բացառելի հեռաբերութեան ներկայացուցչի շինութիւններից մէկն է գուցէ ամբողջ ցուցանահնդէսում։ Բայց այդ շէնքի մասին գրելուց առաջ՝ գուցէ աւելորդ չի լինի Գրմէրների մասին մի քանի խօսք՝ սակայն։ Գրմէր այն պատմական անուններից մէկն է, որոնք իրանց դերը կատարած, իջած են ասպարէզից, թողնելով միայն հսկայական յիշատակարաններ, ինչպէս Եգիպտոսիցները։ Այդ ցեղը Գրիստոսից 500 տարի առաջ ապրում էր Հնդկ-թաւաւորի որդի Պրէա-Տոնգի առաջնորդութեամբ նա, ու գիւտ էին պատճառով, զաղթեց դէպի հարաւ, ուր այս պատերազմաբեղը կարողացաւ դէնքի ուժով մի նոր թագաւորութիւն հիմնել, որ կոչվեց Կամբոջա, այսինքն Շլոթից դուրս եկած։ Այստեղ կամբոջայում, այս ժողովուրդը մօտ 1500 տարի վայելեց իր անկախութիւնը և ստեղծեց մի քաղաքականութիւն, որի յիշատակարանները նոյն իսկ այսօր կարող են մրցել Հնդկաստանի և Եգիպտոսի պատմական յիշատակարանների

դատարանով պահանջել իրաւագործի հօրից իրեն հառանելի մասը թէ հայրական և թէ պապական անգին կարողութիւնից, բայց մեծահոգութեամբ և ներողամտութեամբ նա չուզեց զարկանել հօրը, և որդիական խոնարհութիւնը գերադասելով, վաղ առա գերեզման մտաւ, որովհետեւ շատ անգամ նրա խնդիրներին, աղաչանքներին ու պաղատանքներին հարուստ հայրը պատասխանում էր «մեռնում ես՝ մեռիր, ես քեզ բժշկելու համար ոչ մի կօպէլ չեմ տալ»։

Բայց ամենից զարմանալին, եթէ չսանք աւելին, այն է, որ երբ հայրը իմանում է իր հարազատ և անգրաւելի որդու մահվան լուրը, նա փոխանակ տխրելու՝ ուրախանում է և դեռ հայոյում էլ է, իսկ երբ դիմում են նրան թաղման ծախքերը հոգալու, նա պատասխանում է. «ես ոչ մի կօպէլ չունեմ դրա համար»։ Հաջի Արշակ աղայի տմարդի վարժուէքը մեր քաղաքի մէջ խօսակցութեան առարկայ է դարձել։

Ստեփան Տէր-Մովսէսեան
ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Եւրոպայի յուլիսի 20-ին

Միշտ արհամարհել եմ այն լիտի և ստալոյ լուրերն ու թղթակցութիւնները, որոնք տղաված են եղել իմ մասին թիֆլիսի մի հայ քրաւորում, որի անունը բարեկից չը յիշանում վաղուց մոռացութեան է տուած։ Հետեւաբար, այն, ինչ որ ընթերցողը ներգեղում կը գտնի, մի ամբողջութիւն է, աւելի չուտ տպաւորութիւնների չարք՝ հիմնված պաշտօնական արձանագրութիւնների և իմ աչքով տեսածի վրա։ Ես այս բանին չէի դիմել, եթէ չը տեսէի, եթէ մարդիկ խիղճն ու ամօքի վերջին նշույլը կօրցրած, պղտորում են անտեղեակների մարքերը և արատաւորում իմ կատարած ընտրութիւնները։

Ես կենսաբան մէջ առաջին անգամն է որ լինում եմ Եւրոպայում, ուրեմն բոլորովին անմասն մէկն եմ։ Առաջին ընտրութիւն նշանակում եմ յուլիսի 25-ին, որ չէ կայանում Պատգամաւորական երկրորդ ընտրութիւն նշանակում եմ յուլիսի 2-ին, որ և կայանում է այսպէս։ 1) Ղազարեցեցի եկեղեցում, իմ նախագահութեամբ, առանց աղքատիկ և շատ կանոնաւոր կերպով, ընտրում են տասն պատգամաւոր։ 2) Աղուշեցի եկեղեցում նախագահը բերում է իր կատարած ընտրութեան թերթերը, որոնց մէջ ոչ մի կանոնաւոր ընտրութիւն չէ կար։ Պատգամից յետոյ ընտրել են իբր թէ 5 հոգի, սակայն արեւմտեան ընտրութիւն չը կայ, այլ ըստ տեղի մի թերթի թուով, որի վրա նախ ստորագրել են տուել ծխականներին, չը գիտեմ ինչու համար, ու յետոյ, արանց բացառաւորութեան ժամանակ, վերստին, հրաջով բաց մնացած երկու տղաւոր տեղի վրա, աւելացնում են իբր ընտրութիւնների անունները, որը և արձանագրութիւն էր անունում նախագահը։ Անկանոնութիւն ակնկեւ էր։ Երեկոյան նոյն ժողովի շարունակութիւն էր գումարվել, ուր ներկայ են եղել 26 հոգի, որոնք չէին կարող ընտրութեան ձեռնարկել ծխականների բաւարար թիւ չը լինելու պատճառով, և սակայն դրանք ընտրութիւններ էին կայացրել։ Ահա թէ ինչու համար յուլիսի 4-ին կայացաւ նոր ընտրութիւն։ 3) Մեղրեցի եկեղեցում նախագահը թէև ևս գործը

հետ։ Անկման չը չանք վրա հասաւ մօտ 1002 թիւին Գրիստոսից յետոյ, մօտաւորապէս նոյն ժամանակներում կամբոջայի թագաւորութիւնը երթարկեց չինացիներին, անսպանքի և սիամցիների յաջորդական արշաւանքներին։ Նրա քաղաքականութեան անկումը և վերջի վերջոյ յաղթող ցեղերի քաղաքականութեան հետ լուծվեց։ Այժմ քրմերներից մնացել են միայն յիշատակարաններ, տաճարների և պալատների մնացորդներ։

Ահա այդ մնացորդների ընդօրինակութիւնով և կազմված այս ճարտարապետական արհը, որ իր անասիկ մէջ եղակի է, թէ իբրեւ 'աւղղված գործ և թէ մանաւանդ իբրեւ վերին աստիճանի ինքնուրոյն ճարտարապետական մի յիշատակարան։ Ներս մտնելու այս դահլիճի առաջին տպաւորութիւնը զսնծ է և ցնցող. եթէ հուրթիւնը, ժամանակի երեսից սեւացած, մաշված այս պատերը իրանց մաշվ տեսքով խօսում են հին դարերից, մասնիկ են տալիս, միւս կողմից չէնք մեծութիւնը և նրա վրա գործ դրված անգին եռանդն ու ոյժը զարմանք են չարութեան Այստեղ, այս խոնարհ կրեւաւոր միջուկում, մարդ արեւելքն է զգում, արեւելքն է նշուած, հին գոտող արքաների առաջ գոյացող այն միջոցաւոր խաւար ստորուկ արարածների երկրից, ուր չէնք արքաների պէս մեծ են ու անաւոր են նրանց գոյութեան ու իշխանութեան պէս շատ կենալ ու աշխատանք արեւելքն է նշուած, այս քաղաքական անգին սիւններին, որոնք կարող են հսկայի անհոգութեան

կանոնաւոր էր տարել, սակայն հաղիւ կարողացել էր 3 հոգի ընտրել տալ։ Որպէս զի գործը շուտ և առանց արմուկի վերջանայ, յուլիսի 3-ին ընտրութեան շարունակութիւն և 7-ին կրկնաքուէարկութիւն նշանակելով ընտրել տուի մնացածներին։ 4) Վերին թաղի ընտրութիւնը հաւատացած էր թէ կանոնաւոր է, սակայն տուի 5-ին իմ ստացած բողոքն և այդ առիթով կատարած ընտրութիւն անկանոնութեան զգուշիկ հանդիմանքներ բացին։ (1) ստեղարդէն թող արձանագրութիւնը խօսի, որից հետեւելով քաղաքում են անում, և... Հայր նախագահը, ժողովը բանալով, հետեւեալ կերպով պատճառաբանեց յուլիսի 2-ի ընտրութեան բեկանումը.— 1) թերթիկներով ձայն են ստացել մի քանի պատգամաւորներ աւելի պակաս, քան արձանագրութեան մէջ, որոնց ցուցովը կարգաց. 2) անգրագէտների կողմից բատորագրութիւն մէկը, պ. Ալեքսանդր Թարխանեան, համաձայն բողոքարկու վերդի Մանուշարեանի, վանկա-բէկ Արախեանի և այլոց ասածի, գրել է ոչ այն անունները, որ իրանք ծխականներն են աւել, այլ այն, ինչ ինքն է ցանկացել, որոնց մէջ և մացրել է իր—Թարխանեանի—անունը։ Ժողովը այդ լսելուց յետոյ, ձեռնարկեց ստուգելու. ներկայ գտնվող վերդի Մանուշարեան պնդեց իր ասածը. իսկ վանկա-բէկ Արախեանի կողմից ներկայացրվեց ստորագրութիւն, որի վրա գրված էին իր ասած մարդկանց անունները, ուր պ. Թարխանեանի անունը չը կար։ Ժողովը, որ սկզբում հակված էր չը ձեռնարկել նոր ընտրութեան, նախկին հարաբերով կանոնաւոր, այդ փաստի առաջ համարեց նախկին ժողովն անկանոն և ձեռնարկեց նոր ընտրութեան։ Ծխականներից ներկայ էին 76 հոգի, որոնց և բաժանվեցին թերթիկներ։ Թերթիկների ստանալուց յետոյ, ժողովականներից չորս հոգի պ. պ. Յովնան Գարրիէլեան, Պօղոս Մախուրեան, Կոստանդին Առաքանեան և Յովնան Գիւրգենեան, չը կամենալով նախկին ժողովականների հաւատան ի չարը գործ դնողի և խարդախողի հետ մասնակցել մի նոր ընտրութեան, իրանց անպատուաբար համարելով այդ թողին ու հեռացան, յետ դարձելով ստացած թերթիկները։ Ստորագրել են նախագահ Արախեան վարդապետ և 55 ծխականներ։

Մեր գործերի երդուեալ ցեղերը կը պահանջէին, երեւի, որ իրանց ապագիւթի գեղեցիկ արարները չարձանագրվէին, ապօրինի չը հաշվէին։ Սակայն բարեխղճութիւնն ու օրինակաւորութիւնը այլ պարտք են դնում մարդկանց վրա, քան նրանք են հասկանում։ Թողնում եմ այս ընտրութիւնից այնպիսի դէպքեր, որոնց ապացոյցները ձեռքումս են, թէ ինչպէս իրան ինչ որ... արան հաւելող մարդ երկու անգամ ինքն իրան է ձայն տուել, թէ ինչպէս հոգեւոր ճեմարանի աւարտողը աւթը թերթիկով տաք քուէ է կարողանում տալ իրան, որ ուղած մարդք անունը նոյն թերթիկի վրա երկու անգամ գրում, որ մի մի ձայն աւելի ստանան, որից ընտրող հասարակութիւնը մի նոր դաս առաւ. թէ մի ձայն ունեցողը, մի մարդու կարող է երկու սպիտակ քուէ տալ. թէ ինչպէս այժման մի հոգաբարձու մի և նոյն ժողովին չորս անգամ ինքն իրան քուէ է տուել, որ հոգաբարձու ընտրութիւնը չը ընտրվեց։ Եւ այլն և այլն։ Այդ իրանց իրանց ընտրողների մասին յուլիսի 11-ի երեկոյան ժողովը միաձայն պ. Ջ. Իշխանեանի բերանով «ամօթ, մեծ ամօթ» ապրիլներին» նախատինքը կարգաց, երբ ևս այդ տեղի արարքները բացին։

Թեամբ լուսնի չալակի, արանք և՛ գեղեցիկ են և՛ հաւաւոր. մարդիկ չինել են արանց արիւն քրտնքով, որպէս զի զոդան իրանց ձեռագործից։ Իւրաքանչիւր սիւնի ստորոտում չոր վիշապներ են շնթկած, լայն բայաց, սոսկալ երակներով, իսկ փղերից վեր, մինչև ևս առաւտաղը, մեծամեծ փղեր, վիշապներ իրար խառնված, կնճիթներն ու դուռները իրար փաթաթած, իրանց մարմինների այլանդակ գալարումներով կազմում են այս զարմանալի սիւնները։ Այս դուռ բաւական չէ. սիւններ խոյակների քանդակների փոխարէն ունին չորս չորս փղի, որոնց մէջքերին է նստում կտուրը։ Պատերը ծածկված են այլաբանական նկարներով, որոնց նշանակութիւնը գուցէ միայն դարերը գիտեն. այստեղ էլ խառն ի խառն և անորոշ կերպով երեւում են ինչ որ սարօրինակ կենդանիների ուրուագծեր, մարդիկ, որոնք անասունների են նման, գազաններ, որոնք մարդ են յիշեցնում, կտուցաւոր հրէշներ, ժանդաւոր թռչուններ, վիշապներ, արձաւուրձներ, փղեր մէկը գլխովայր, միւսը գալարված, երրորդը կծկված, իրար խառնված, փաթաթված, քաշքաշված են, ծովում կազմվելով մի զարմանալի ժողոր, հակա երեւակայութեան հրէշաւոր ծուռնը։ Տպաւորութիւնը ապացուցել է՝ Առանց կարողանալու լաւ որոշել այդ զարմանալի քանդակները, առանց հասկանալու նրանց խորհուրդը, մարդ այնուամենայնիւ երկաթ ժամանակ չէ կարողանում աչք հեռացնել նրանցից։

Ա. Անարտեան

Նամանակներ մինիստրին. «Ե՛ն կատ անկողնի ար-
տակարը ծախսերը, որոնք առաջ են եկել հե-
ռաւոր Արեւելքում տեղի ունեցող անցքերի
պատճառով, անհրաժեշտ համարվեց ժամանա-
կաւորապէս աւելացնել եւրոպական առեւտրի
մասնաւոր տուրքերը մի քանիսը. թողնելով
դաշնագրերի մէջ յիշատակված մաքսային տուր-
քերը անփոփոխ, համաձայն Ռուսաստանի օ-
տար պետութիւնների հետ կապում առեւտրա-
կան դաշնագրութիւնների:

Զիտից հետագրում են, թէ գնեւորալ Օրբով
իր զորարարման յուլիսի 17-ին կտու ունեցաւ
չինական կանոնադր զորքի հետ: Յաղթելով
թշնամուն՝ զորարարներ հալածում էր նրան
18 վերստ տարածութեան վրա: Անոված են
մի պողպատեայ թնդանոթ, 8 զորակի, 7 սալ
եւ յատ դէնքեր ու գնդակներ: Մեղանից ըս-
պանվեցին 7, վիրաւորվեցին 21 հոգի:

Ռուսաց հրաւատութիւն հետագրում է, թէ,
յուլիսի 26-ից. «Իւանչիկայ հետագրում է, թէ,
համաձայն ցուցիչ-նամակների հաղորդագրու-
թեան յուլիսի 17-ից, բոլոր գեապանները կեն-
դան են: Բարեկամական յարաբերութիւնները
վերականգնել են: Քննութեան են ենթարկում այն
միջոցները, որ հարկաւոր է ձեռք առնել դեա-
պաններին Տեանձին ուղարկելու համար: Այս
մասին ցուցիչ-նամակն ինդրում է հաղորդել
պետութիւններին՝ նրանց միամտացնելու համար:

ՏԵԱՆԶԻՆ: 13 յուլիսի Բոլոր ազգերի զը-
լաւոր հրամանատարները համաձայն են իրար
հետ այն բանում, որ անգլիայիները առանց
պատճառի յաղաղեցնում են Պեկինի ազատումը:
Այդ առիթով սատարի անբաւականութիւն է
տիրում:

ՏԱՆԳՆԱՅ: Շանդունի նահանգապետը հե-
ռագրում է, թէ օտարազգի դեսպանութիւն-
ները Պեկինում անջնաւ են ինչպէս յուլիսի 14-ին
«Մեծ բուռնցքը» եւ ինական զորքերը կտու
են միւսում իրար դէմ: Պեկինից փախածները
հաղորդում են, թէ մայրաքաղաքի հարուստ
ընտանիքների մեծամասնութեան աները կողոպ-
տելված են Իւնյուի եւ Տունփուցիւնի դի-
նոտներին ձիւղով: Լիպիններին հրամանով
գլխավորածներ թուում գտնվում էր Պետեր-
բուրգի նախկին ինտանդանտը ինտելեկտ-
չէին: Յայտնի անձնաւորութիւններից միայն
գնեւորալ Իւնյու եւ Վանվեյզման խաղաղ քա-
ղաքականութեան կողմն են, բայց նրանց ազ-
գեցութիւնը չնչին է:

ՏԱՆԳՆԱՅ: Լի-Պուն-Չանգ կոչ է խմբա-
գրում, որ պէտք է տարածվի Զիլիի ամբողջ
նահանգում եւ օրի մէջ ներուժն խոտացված
կը լինի «Մեծ բուռնցքին» պատկանող բոլոր
այն անձերին, որոնք այլ եւս չեն մասնակցի
խառնակութեաններին եւ կը վերադառնան ի-
րանց աները:

ՊԱՅԻՉ: Ֆրանսիական ոյժերը Զինաստա-
նում կը հասնեն 15,000 հոգու: Զորքերի վեր-
ջին խումբը ճանապարհվում է Ֆրանսիայից օ-
դոստոսի 5-ին:

ԲԼՈՒՄՖՈԼՏԵՆ: Հօնիգսպրոյտի մօտ, Կրօն-
շտապոյից դէպի հարաւ, բոլորների մի թուղիկ
պահախուսը խորտակեց եւ այրեց երկաթու-
ղու գնացքը, որի չողակառքի վրա բարձրացած
էր. ամերիկական զրօշակ, որովհետեւ մէջը
գտնվում էր ամերիկական գլխաւոր հրաւատու
գնդապետ Ստեփէ: Սպանվեցին չորս հոգի, վի-
րաւորվեցին երեքը: Գնդապետ լորդ Օլբերման
Լինչօլի եւ 40 հոգի գերի բռնվեցին, բայց ա-
մերիկական գլխաւոր հրաւատու խնդրեով
ազատ թողնվեցին:

ԼՈՆԴՈՆ: Մովակալութեան մէջ ստացված
է ծովապետ Ալեքսանդրի հեռագիրը՝ նրա եւ
Նանկինի փոխարքայի տեսակցութեան միա-
սին: «Փոխարքայ»-ը գրում է Ալեքսանդր-շատ
սիրալիք էր եւ ըստ երեւոյթին ուզում է խա-
ղաղութիւն պահպանել Եանցէի հովիտում:
Նա թող տուեց 3000 անգլիական զօրք ափ
իջեցնել Շանգայի պաշտպանութեան համար:
Հետեւեալ օրը փոխարքան պատասխանեց ծո-
վապետի այցելութեանը եւ կրկնեց բարեկա-
մական հաւատարմութիւնը: Համաձայնութիւն է
կայացրած Եանցէի հովիտում խաղաղութիւն
պահպանելու միջոցների մասին:

24 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Գրօզեկովի հեռագիրը. «Յու-
լիսի 23-ին Ալեքսանդր անված է յամառ կուլից յե-
տոյ. թշնամին հալածվում է ցիլիկարեան ճանա-
պարհով: Գնեւորալ Գրօզեկով յուլիսի 21-ին
եւ 22-ին հեռագրում է. «1) Յուլիսի 20-ին
հետախուզութեան է ուղարկված դէպի Նիւի-
զըտի ճանապարհը մի զօրախումբ: Եկա գիւղի
մօտ այդ զօրախումբը հանդիպեց մի չինական
զօրաքաճնի, որ բաղկացած էր մօտ 1000 հե-
տեւակներից երկու թնդանոթով եւ 250 հե-
ծեակներից: Զինացիները կրակ բաց արին:

Ռուսաց զօրախումբին օգնութեան է ուղարկ-
ված մի էսկադրօն, եւ ապա երկու բոտա
երկու թնդանոթով: Եկա ինքնաշարժաւոր
տեղի ունեցաւ երկուստեք խիստ հրացանա-
ձգութիւն: Զինացիներն յետ մղվեցին եւ սկը-
սեցին արագութեամբ նահանջել, մասամբ դե-
պի Նիւգուտա: Եկա գիւղը բոլորովին մաքըր-
ված է: 2) Բլազովսկիէն եւ Ալեքսանդր մօտ
տեղի ունեցած գործողութիւնների շարունա-
կութիւնը: Յուլիսի 21-ին մեր զօրքերը շա-
րունակում էին յետ նահանջել Ամուրի աջ ա-
փով: Թշնամին, նահանջելիս, կանգ էր առնում
առաջուց խրամատներով պատրաստված ամուր
դիրքերի վրա: Զննապարհին գտնված է ահա-
գին քանակութեամբ հրանոթների պաշար: Կօ-
զակները վերջին երկու պողպատեայ հեռա-
ձիգ թնդանոթներ, ձիաների եւ ուղեւորի հետ,
շատ զօրակաւորներ եւ երկու զրօշակներ
այսպիսի մակագրով մէկի վրա՝ «Մեծ բուռնց-
քի ժողովուրդ», իսկ միւսի վրա՝ «Օգնենք
Զիլին» օջաւանները եւրօպայիներին:

ՏԵԱՆԶԻՆ: Զինացիները քանդակեցին ջրանցքի
հողթութեմը: Պեկինի եւ Տեանձինի մէջ եղած
տարածութիւնը ծածկված է ջրով: «Մեծ բը-
ռնցքին» պատկանող 30,000 մարդիկ գտնվում
են Տեանձինից 8 մղոն հեռու: Կոյւ պէտք է
լինի:

ՏԱՆԳՆԱՅ: Յուլիսի 23-ին Լի-Պուն-Չանգ
ինքնապանութիւն գործեց:

ԲԵԼԳԻԱ: Յուլիսի 23-ին տեղի ունեցաւ
Ալեքսանդր թագաւորի պատկառութիւնը մեծ
հանդէսով:

ՊԱՐԻՉ: Շանգայի ֆրանսիական հրաւատ-
ուր հեռագրում է, թէ, ինչպէս հաղորդեց Լի-
Պուն-Չանգ, Լիպիններն Պեկին գնալու օրից
նշանակված է հրաւատի Զինաստանի զօրքերի
հրամանատար:

ՏԱՆԳՆԱՅ: Շէն հաղորդում է, թէ կայսե-
րական հրամանով յուլիսի 20-ից՝ դեսպաններին
թոյլ է տրված գրագրութիւններ ունեւալ ի-
րանց կառավարութիւնների հետ առանց ծած-
կազդի: Հրամայված է վատահիլի կողմերի
հակողութեամբ ուղարկել նրանց Տեանձին:

ՍԵՐԱՊԵՐ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱՆԱԹԱՐ
Հրատարակչին: ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԷԼԻՔ-ԱՆԱՄԱԼԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐՈՎԱՍՏԱՆ ԵՐԿԱՅՈՒԴԻ
(ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւն 58 րոպէ:

№ 5 գնացքը:	№ 3 գնացքը:
Բաղրից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ. 8 ժ. 53 ր.	եր. 5 ժ. 34 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս 9 ժ. 32 ր.	եր. 6 ժ. 34 ր.
Բաթում է հասնում եր. 9 ժ. 1 ր.	առ. 7 ժ. 14 ր.
№ 6 գնացքը:	№ 4 գնացքը:
Բաթումից դուրս է գալիս առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում եր. 7 ժ. 15 ր.	առ. 8 ժ. 42 ր.
Թիֆլիսից դուրս է գալիս 7 ժ. 18 ր.	10 ժ. 05 ր.
Բաղու է հասնում ցեր. 12 ժ. 10 ր.	5 ժ. 16 ր.

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	Երեկ	9	ժ.	—
Եւէքաւից դուրս է հասնում		7	»	46 ր.
Կարս հասնում է		12	»	56 »
Կարսից դուրս է գալիս		5	»	29 »
Եւէքաւից դուրս է գալիս	Երեկ	8	»	35 »
Թիֆլիս հասնում է		7	»	15 »

ՍՈՒԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՄԱՆՎԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(կուկիս, Վորոնցովի արձանի հանդէպ)

ա մ ի ճ օ Ր, բ ա ճ Ի կ ի Ր ա կ ի օ Ր ի ի ց:
Ա Ռ Ա Ռ Օ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախաւորեալ—11—12 ժ. վիրաւորու-
թեան, վնասակաւ (սիֆիլիս) եւ միապատ. հիւանդ.

Կ. Մ. Զիլովանի—9—10 ժ. ալքի, ներքին եւ
ներաւային հ.

Բ. Զ. Պրոսեսիլի—12—1 ժ. ալքալի, քթի, կս-
կոր զի եւ կրքէ հ.

Զ. Բ. Բարաւանանց—11—12 ժ. կանանց եւ երե-
կայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետանց—1—1/2 ժ. ներքին եւ երե-
կայոց հ.

Բ. Զ. Պրոսեսիլի—6—7 ժ.

Բ. Ա. Նախաւորեալ—7/8—8 ժ.

Վճար 50 կ. չքատրեւրը ձրի համարորդի (կօն-
սիլիսի) եւ օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Սալվանի—տանը, ծաղկահատ եւ բժը-
կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ
Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Բ ժ ի Շ Կ
Արտաշէս Շիւան
Վերականգն է հիւանդների ընդունելութիւնը
Վերականգնութեան փողոց, № 7

Առանձին օր 9—11 ժամը առաւօտեան
5—7 ժամը երեկոյեան
(ե. հ. չ.) 1—3

НОВОЕ
ФРАНЦУЗСКОЕ
ПЕЧЕНИЕ
С. СІУ и К.
PETIT BEURRE
МОСКВА
С. СІУ и К.

ԹԻՖԼԻՍԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԿԻՏԵԿՏԱՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ
Ժամանակում է ի գիտութիւն պ.պ. բաժնետէրերի, որ այս յուլիս ամսի 25-ից մինչեւ
առաջիկայ օգոստոս ամսի 1-ը (նշանակված է 10% վճարում, այսինքն
իւրաքանչիւր բաժնին 25 րուբլի: Վճարը մտցնելիս պէտք է անմիջապէս ներկայացնել նախկին
վճարների անգործագրերը:
Ժամանակին վճարը չը ներկայացնող բաժնետէրը, համաձայն ընկերութեան պայմանագրի
23-րդ ծանօթութեան 4-րդ յօդուածի, զրկվում է մինչ այդ իրան արած վճարներից:
(11, 18 եւ 25)

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Լեւոնտովսկայա փողոց, № 9)
Ծանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւար-
տած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնովին, Ս. Մ. ա-
ն ու է լ հ ա ն ց ի ն: Աւարտողները ստացել են ժամգրտական առեւտրական կրթութիւն, Կովկա-
սի ուսումնարանական չլքանի հաղաբարձութի հաստատված ծրագրի համաձայն եւ ունեն օրինա-
ւոր ատտեստատներ:
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ
Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Մովսիսեանի
բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնովին ընկալարանում: Օտարաքաղաքացիները դիմում
են ԿՈՒՐՍԵՐ, учредителю коммерческих курсов С. П. Мануэляну. (Ե) 4—12

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՅԻՍԵՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԼԻՑ ԲԱՅՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու
շաբաթ մի անգամ:
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մանկով Տրապիզօն, Սամսօն եւ Պօլիս: Մեկնում է
Բաթումից չորեքշաբթի, 2/3 օգոստոսի ԱՆԱՏՈԼԻ չողկնաւոր, առաւօտ ԲԻՆԵԼԻ: Եւ այս-
պէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս գներով:
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտիպոլիսի մէջ, ընդու-
նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-
մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:
ԲԱԹՈՒՄԻՄԻՍ—պ. Վիկտոր ԳԱՐՍՅՈՒՆ, Նաբէրէժնայա, Թիֆլիսի Մ—պ. Ս. Գ. Բարե-
կենդանանին, Միսին փող. Խօշտիկարանայի եւ Մայսուրաձէի քաղաքաւոր: ԲԱԹՈՒՄ—Եղբ.
Վ. եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՍ-
ՍԻՅԱԿ—Վաղիկաւոր երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 11—20

Ֆիւնանսների մինիստրի թոյլտուրեամբ
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Բաքու, Прачешная, домъ Теръ Ованесова)
Կուրսերի նպատակն է տալ ունիւորներին մասնադիտական-առեւտրական կրթու-
թիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողներն ստանում են ա տ տ ե ո-
տ ա տ ն ե ի Կուրսերում աւանդվում են 1) Առեւտրական թուարանութիւն եւ թուա-
րանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանային,
առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական սնտե-
սագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գնեղագրութիւն եւ ա-
րագագրութիւն (ուղղումն ձեռագրի):
Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Մովսիսեան
եւ ընկ. ԲԱԹՈՒՄԻ քաժանմուշքում: Կուրսերի կանոնադրութիւնը (УСТАВЪ) եւ
մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները
դիմում են՝ ԲԱԿՄ, учредителю коммерческих курсовъ А. И. Теръ-Каспа-
рову. (Ե. չ.) 9—25

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.
И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.
преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая ариѳметика,
3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 5) Торговья и
вексельныя узаконенія и 6) Коммерческая корреспонденція.
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручатель-
ство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся
во всѣхъ книжныхъ магазинахъ.
Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 3—20
Годъ занятій одиннадцатый.